ԸՆԴԻՄԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Աննա Երկանյանի ,,Գևորգ Դևրիկյանի ստեղծագործությունը,, թեկնածուական ատենախոսության վերաբերյալ

Աննա Երկանյանի ատենախոսությունը, ինչպես նշված է սեղմագրում, ,,նվիրված է 20-րդ դարի երկրորդ կեսի գրող-հրապարակախոս Գևորգ Դևրիկյանի ստեղծագործությունների ընդհանուր վերլուծությանը,, /սեղմ., էջ 3/: Ընդ որում, թեմայի ընտրությունը կարևորվում է նրանով, որ Գ. Դևրիկյանի ,,գրական ժառանգության և հասարակական գործունեության մասին թեև տասնյակ հոդվածներ են գրվել, որոնք ցրված են ժամանակի մամուլում, ինչպես նաև գրաքննադատների հոդվածների ժողովածուներում, սակայն նրա ստեղծագործություններն ամբողջականորեն քննող գիտատեսական աշխատանք դեռևս չկա,,: Ըստ այդմ, ատենախոսի հավաստմամբ, սույն ուսումնասիրությունը ,,լրացնելու է հայ գրականագիտության մեջ Գևորգ Դևրիկյանի ստեղծագործության քննական-ամբողջական վերլուծության բացը,, , ինչը և պայմանավորում է նրա գիտական նորույթը /սեղմ., էջ 4/:

Հետևապես, ելնելով գրողի ,,գրական ժառանգության ամբողջական քննության,, նպատակադրումից, ատենախոսն առանձին գլուխներում հիմնավոր հետազոտության է ենթարկում նրա գլխավոր երկերը՝ ,,Տրդատ ճարտարապետ,, /1983/, ,,Գոյամարտ,, /1986/ պատմավեպերը, այսպես կոչված ,,հայոց պատմության անցումային շրջանին նվիրված ստեղծագործությունները՝ ,,Վիրավոր կռունկ,, /1977/ վեպն ու ,,Որբացած հուշարձան,, /1975/ ,,պատմագեղարվեստական արժեք,, ունեցող աշխատությունը, ինչպես նաև պատմական ու արդիական խնդիրներ արծարծող պատմվածքները, կամ ,,փոքր արձակը,,:

Կարծում ենք, ճիշտ է վարվել աշխատության հեղինակը՝ ատենախոսության գլխաբաժանման հիմքում դնելով ,,Գ. Դևրիկյանի ստեղծագործությունները ժանրային թեմատիկ բաժանմամբ ներկայացնելու սկզբունքը,, /սեղմ., էջ 5/, ինչը թեև խախտում է նշված երկերի լույս ընծայման ժամանակագրական հաջորդականությունը, սակայն հնարավորություն է տալիս խուսափելու անհարկի կրկնություններից, ինչպես նաև առաջին պլան մղելու գրողի առավել նշանակալից երկերի քննությունը:

,,Ներածության,, մեջ ատենախոսն իրավացիորեն նախ և առաջ անդրադառնում է պատմական թեմատիկային դիմելու ժամանակի ընձեռած հնարավորություններին: Ըստ նրա, անցյալ դարի 60-80-ական թվականներին ,,նոր մոտեցում է ձևավորվում պատմության հանդեպ,, , որը պայմանավորված էր ,,անհատի պաշտամունքի հաղթահարմամբ,,: ,,1960-ականների գրական սերունդը նոր նվաճումներ է արձանագրում անցյալի գեղարվեստական ընկալման և մեկնաբանման, ազգային-պատմական արժեքների վերագնահատման և վերաիմաստավորման գործընթացում՝ կարևորելով անցյալի փորձն ու դասերն արդիականությանը ծառայեցնելը,, /էջ 3/: Հանդես գալով նշված շրջանում՝ իր մի շարք գրչակիցների հետ, Գևորգ Դևրիկյանը ևս շարունակում է հայ պատմագրության ավանդույթները, ,,նորովի հարստացնելով խորհրդահայ պատմավեպը,, /էջ 20/:

Ո՞րն էր այն նորը կամ ,,նորովին,, , որ նշում է ատենախոսը:

Նախ՝ ժանրային առանձնահատկությունը: Ընդգծվում է, որ, օրինակ, ,,Տրդատ ճարտարապետ,, պատմավեպը կարելի է համարել նաև պատմազեղարվեստական տարեգրություն, որում գործողությունները զարգանում են ըստ ժամանակային ընթացքի,, /էջ 25/: ,,Վիրավոր կռունկ,, վեպը կառուցվել է ,,դեպքերն իրար հաջորդելու սկզբունքով,՝ 30 դրվագ-գլուխներով, ,,Գոյամարտ,, վեպում ,,հեղինակը հավատարիմ է մնում պատմությանը՝ դեպքերի ընթացքը ներկայացնելով ժամանակագրական կարգով: Այդ իսկ պատճառով այն կարող ենք համարել վեպ-ժամանակագրություն…,, /էջ 54/: Միաժամանակ, նշվում է, որ պատմական հավաստիության հասնելու իր ձգտման մեջ գրողն ուսումնասիրել է ոչ միայն ժամանակի պատմիչների /Ասողիկ, Լաստիվերցի, Ուռհայեցի/ երկերը, այլև ,,պատմագիտական հարուստ գրականություն,,: Ի վերջո, եզրակացվում է, որ ,,Տրդատ ճարտարապետ,, պատմավեպը նաև պատմակենսագրական վեպի է նմանվում, իսկ ,,Գոյամարտը,՝ վեպ-ժամանակագրության,, /էջ 54/: Եվ ապա՝ վեպի գլխավոր հերոսի՝ պանդուխտ Արթինի ,,ճանապարհորդությունը ուղեգրական ու նաև գիտաճանաչողական ուղղվածություն է հաղորդում վեպի հետագա ընթացքին,,: Ընդ որում, այդ ամենը ինքնանպատակ չէ: Ինչպես նշում է ատենախոսը, ,,Գևորգ Դևրիկյանը վեպը գրելուց առաջ հետազոտական մեծ աշխատանք է կատարել, ուսումնասիրել ժամանակի հայկական ուղեգրական և վաճառականական երթուղիները և վեպի գործողությունները ներկայացրել 17-րդ դարի Արևելյան Եվրոպայի հայկական ուղիների շրջանակում,,

/Մոլդովա, Ռումինիա և այլն/ /էջ 77/: Ատենախոսը կարևորում է նաև այն, որ Գ. Դևրիկյանն իր երկերում ,,անդրադառնում է ոչ միայն միջնադարյան թեմատիկային, այլև փորձում է ներկայացնել ժամանակի մտածողությունը,, /էջ 45/: Ըստ այդմ, քանի որ ,,դաստիարակչական և ուսուցողական նպատակով խրատական գործերը բնորոշ էին միջնադարյան մտածողությանը,, , Գ. Դևրիկյանը ևս նման հնարանքի դիմում է ,,մեր երկրի անցյալի երբեմնի փառքը և հոգևոր ժառանգությունը պատկերելու համար,,: Իսկ, ահա, ,,գեղարվեստական նման կառուցվածքի և շարադրանքի ընտրությունը ստուգաբանվում է դիդակտիկ գրականության շրջանակում /ընդծումը մերն է – Պ. Դ./: Օրինակ, Տրդատի ,,ուսումնառության ժամանակ ճարտարապետության արվեստն ասես սովորում է նաև ընթերցողը,, /էջ 45/: Կամ՝ ,,Ուսուցողական-խրատական բնույթ ունեն,, նաև Տրդատի ուսուցիչների մտքերը, Տրդատի խորհուրդներն իր աշակերտին՝ Անդրեասդին /էջ 50/: Եվ ապա՝ հատկանշական է համարվում ,,պատմության երկաստիճան դիտարկումը, որը ևս կատարվում է ուսուցողական նպատակով,,: Այսինքն՝ ,,Պատմության մեջ պատմության դիտարկումը /օրինակ, Մ. Խորենացու ,,Ողբի,, - Պ. Դ./ բարձրացնում է վեպի արդիական հնչեղությունը,, /էջ 49/: Եվ ընդհարրապես, ինչպես նշում է ատենախոսը, ,,... վեպում շարունակ կենդանիորեն ներկա է Մովսես Խորենացին, որը գծեց մեր պատմության հետագա ընթացքի խորհուրդը,, /էջ 33/:

Վերջապես, հիմնավոր քննության առնելով Գ. Դևրիկյանի ,,Սրբացած հուշարձան,, երկը և մեջբերելով այդ գործի գրության մեթոդի ու ժանրի վերաբերյալ արտահայտված տարբեր կարծիքները /,,Էսսեների ժողովածու, վիպագրություն-ժամանակագրություն,, , ,,պատմագեղարվեստական ժամանակագրություն,,/, ատենախոսը եզրակացնում է, թե ,,Մեր կարծիքով սույն աշխատությունը պատմագեղարվեստական ժամանակագրություն է, քանզի Գ. Դևրիկյանը ոչ միայն պատմությունն է շարադրում՝ օգտվելով այս կամ այն աղբյուրներից, այլև պատմական ժամանակագրությունը ընդհատում է գեղարվեստական հատվածներով՝ մեջբերելով հայ հին և միջնադարյան ինքնատիպ նմուշներ,,: Ավելին՝ ընդգծելով, որ ,,Ահա այստեղ է Գ. Դևրիկյանի գրական մեթոդի գեղեցկությունն ու նորարարությունը՝ համադրական գրականություն, պատմագիտություն, վավերականություն, արխիվային փաստաթղթեր և հեղինակային գրական շարադրանք,, /էջ 94/:

Գևորգ Դերիկյանի գեղարվեստական մտածողության յուրահատկություններից ատենախոսության մեջ դիտարկվում են նաև ,,բնության պատմականացումը,, , բնության երևույթների /օր.՝ ,,Տրդատ ճարտարապետ,,-ում Արազած լեռան/ խորհրդանշական դերը, ,,միջնադարում ձևավորված թե՛ եկեղեցական և թե՛ ծիսական արարողությունների,, նկարագրությունները, ,,մարդու և բնության արարչական դաշնությունը,, /բնություն և ճարտարապետություն/, ապա նաև ազգագրական ավանդույթների, սովորությունների, միջնադարյան բանահյուսական, լեզվական՝ գրաբարյան և միջին հայերենյան բառաշերտերի մեջբերումները՝ ,,ժամանակի կենդանի շունչը,, վերարտադրելու նպատակով: Նշվում է, որ, մասնավորապես, սիրային տեսարաններում, գրողը դիմում է հայրենների օգնությանը՝ յուրովի միաձուլելով միջնադարյան չափածոն և արձակը, ինչը ևս, ատենախոսի համոզմամբ, ,,դերիկյանական արձակի նորարարություններից,, է /էջ 42/:

Գ. Դերիկյանի երկերի հիմնավոր քննության մեջ ատենախոսը շեշտում է նաև գրողի կերպարաստեղծման ունակությունը: Ըստ նրա, օրինակ, ,,Տրդատ ճարտարապետ,, պատմավեպի գլխավոր հերոսի կերպարում համոզիչ է պատկերվում այն իրողությունը, որ հետադեմ եկեղեցականներից ու տգետ չարակամներից հալածված Տրդատը, թեև ստիպված է հեռանալ Անիից, բայց երբեք ,,չի չարանում,, մարդկանց դեմ /էջ 37/: Նույնքան բնական են կերտված նաև նրան հակադիր հերոսների՝ Մակար վարդապետի և վանահոր կերպարները, ,,որոնք փորձում են Տրդատի հոգուց արմատախիլ անել վեհն ու մարդկայինը…,, /էջ 41/: Աստիճանական զարգացման /անփորձ արքա – պանդուխտ հայորդի – վրիժառու թագավոր/ ընթացքի մեջ է ներկայացվում ,,Գոյամարտ,, պատմավեպի գլխավոր հերոսի՝ Գագիկ II-ի կերպարը, իսկ ,,Վիրավոր կռունկ,,-ի գլխավոր հերոսի անցած ճանապարհը բնորոշվում է ,,Պղնձագործ Արթինից մինչև տպագրիչ ու գիրք ընդօրինակող, զինագործից մինչև ազգային-ազատագրական գործիչ,, ուղեգծով /էջ 85/:

Ինչ վերաբերում է Գ. Դերիկյանի ստեղծագործությունների հիմնական գաղափարական հենքին կամ միջուկին, ապա դա, ըստ ատենախոսի իրավացի դիտարկման, ուժեղ, անկախ պետականության ստեղծման և հայ ժողովրդի միասնականության գաղափարներն են, որոնք արտահայտվում են նաև խորհրդանիշ պատկեր – իրողությունների միջոցով: ,,Տրդատ ճարտարապետ,,-ի հերոսը, ի վերջո, վերադառնում է Անի և կառուցում Ս. Աստվածածնին նվիրված Մայր տաճարը: ,,Անի քաղաքի կառուցման միջոցով հեղինակը շեշտադրում է հզոր պետականություն ունենալու

գաղափարը,- եզրահանգում է ատենախոսը,- պարիսպների կառուցումը խորհրդանշում է թշնամուց մշտապես պաշտպանված լինելը, իսկ Մայր տաճարի կառուցումը՝ իր չորս հզոր սյուներով՝ հայ ժողովրդի միասնությունը,, /էջ 40/: ,,Գոյամարտ,,-ում նշվում է, որ ,,Ճիշտ է, զահազուրկ է Գագիկ արքան, կործանվել է Բագրատունիների հարստությունը, սակայն Գ. Դերիկյանը պատմավեպն ավարտում է Կիլիկիայի հայոց պետության հիմնմամբ՝ հավատալով հայոց անկախ պետականության ստեղծման մոտալուտ լինելուն,, /էջ 60/:

Եվ ապա՝ արդեն ավելի արդիական հնչողությամբ. ,,Ի մի բերելով և ամփոփելով ասվածը, կարող ենք արձանագրել՝ Գևորգ Դերիկյանի ,,Տրդատ ճարտարապետ,, և ,,Գոյամարտ,, պատմավեպերն ունեն արդիական հնչեղություն և անմիջական արձագանքն էին 1980-90-ական թվականներին հայ ժողովրդի առջև ծառացած խնդիրների: Արցախյան շարժման նախօրեին գրված ,,Գոյամարտը,, պետք է ոգեշնչեր հայ ժողովրդին և առաջ մղեր՝ ի կատար ածելու մի գոյամարտ ևս,, /էջ 66/:

Այդուհանդերձ, ավելորդ չենք համարում ներկայացնել մի քանի դիտարկումներ, որոնք, մեր կարծիքով, կարող են օգտակար լինել ատենախոսին աշխատանքի հետագա մշակումների ընթացքում: Այսպես՝

ա/ դրվատելի է, որ Գևորգ Դերիկյանի ստեղծագործությունների քննությունը ատենախոսը կատարում է դասական և ժամանակակից գրողների /Ռաֆֆուց մինչև Վարդան Գրիգորյան/ պատմական թեմատիկայով գրված երկերի հետ առնչությունների համատեքստում, ընդ որում՝ նկատելով և վերլուծելով ոչ միայն նմանությունները, այլև տարբերությունները /օրինակ՝ Դ. Դեմիրճյանի, և Վ. Խեչումյանի դեպքում/ : Կարծում ենք, սակայն, որ այդ ցանկում կարելի էր ընդգրկել նաև դասական Ծերենցի և ժամանակակից Միքայել Շաթիրյանի՝ հատկապես Կիլիկիայի հայոց պետությանը նվիրված պատմավեպերը: Մանավանդ որ վերջինի 1980-ականի կեսերին լույս տեսած ,,Արծաթե դար,, երկհատոր պատմավեպը գեղարվեստական մտածողության և ոճական հարցերում որոշակի աղերսներ ունի Գ. Դերիկյանի ստեղծագործությունների հետ,

բ/ ատենախոսը նշում է, որ Գ. Դերիկյանի ,,Անիին նվիրված եռագրության,, երրորդ մասը՝ ,,Խորհուրդը մաքառմանը,, դեռևս անտիպ է,, /էջ 7/, սակայն դա չի ներառված նախորդ՝ 6-րդ էջի տողատակում գրողի անավարտ և անտիպ գործերի թվարկման մեջ: Նույնը վերաբերում է նաև ,,Հայոց մեծերը,, -ի 2-րդ հատորին,

գ/ Հովհաննես Մելքոնյանի ,,Իմ Մելքոն պապը,, և ,,Քարավան,, գործերը նշվում են որպես վեպեր, մինչդեռ իրականում վիպակներ են /էջ 4/,

դ/ Գ. Դերիկյանի ստեղծագործությունները գնահատողների, ինչպես նշվում է՝ ,,գրականագետների և արվեստագետների,, թվում հիշատակվում են նաև գրող-լրագրողներ Ս. Մուրադյանը, Գր. Ջանիկյանը, Վ. Սանթրյանը…

ե/երբեմն ատենախոսության նախորդ էջերում արդեն իսկ հիշատակված երկերը, ինչպես նաև որոշ բնորոշումներ թվարկվում են անհարկի /օր.՝ էջ 13/,

զ/ կան լեզվական վրիպումներ և անհարթություններ: Օրինակ՝ ,,Գ. Դերիկյանը շարունակում է գրել ակնարկներ՝ /…/ որոնց միախառնվում են պատմականությունը և գեղարվեստականը,, /էջ 6/, ,,Մաքառումը,, պատմական և երգիծական թեմաներով /?/ պատմվածքների ժողովածու է,, /էջ 7/, ,,Մաքառում,, պիեսը, ,,որը հեռուստատեսային բեմականացման ենթարկվեց /?/…,, /էջ 13/, ,,Պատմավեպում հատկանշական է հատկապես /?/…,, /էջ 49/, ,,Վիգեն Խեչումյանի ,,Գիրք լինելությունը /?/…,, /էջ 54/ և այլն:

Ամփոփելով ասվածը, նշենք, որ ամբողջության մեջ ներկայացված ատենախոսությունը՝ լինելով տևական և հիմնավոր ուսումնասիրությունների արդյունք, 20-րդ դարի երկրորդ կեսի գրող-հրապարակախոս Գևորգ Դերիկյանի ստեղծագործությունների ամբողջական ընդգրկման և վերլուծության առաջին փորձը, լիովին բավարարում է գիտական աշխատությանը ներկայացվող պահանջները, գրված է գիտական բարեխղճությամբ ու մակարդակով, հրապարակի վրա եղած գիտական աղբյուրների հաշվառմամբ ու վերլուծությամբ, հետևապես միանգամայն հնարավորություն է տալիս հեղինակին հայցելու բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Պետրոս Հ. Դեմիրճյան

05. 07. 2022թ.

Բան. գիտ. դոկտոր